



ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ  
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

## Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրումը  
«Երաժշտություն» առարկայի դասավանդման  
պրոցեսում, որպես հավելյալ գրականության,  
ձայնադարանի և տեսադարանի լրացուցիչ աղբյուր»

Մասնակից՝ Դիանա Գասպարյան  
Դպրոց՝ Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան  
12 հիմնական դպրոց  
Վերապատրաստող՝ Անահիտ Կոշկարյան

*Վաղարշապատ*

*2022թ.*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
1.1 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ .....	4
1.2 ՍՈՒԼՏԻՄԵԴԻԱՆ, ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑ .....	6
2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ և ԴԱՍԿԱՐԳՈՒՄԸ .....	8
3. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՅՔԸ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈ- ԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲԸ, ՈՐՊԵՍ ՀԱՎԵԼՅԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՁԱՅՆԱԴԱՐԱՆԻ և ՏԵՍԱԴԱՐԱՆԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՂԲՅՈՒՐ .....	12
4. ԱՄՓՈՓՈՒՄ.....	16
5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ .....	17

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գործունեության տարբեր ոլորտներում S2S տեխնոլոգիաների օգտագործումը ներկա ժամանակներում դարձել է մշակույթի մաս և անհրաժեշտ չափանիշ:

Կրթության տեղեկատվայնացման գործընթացը գտնվում է ինտենսիվ աճման փուլում: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք ի հայտ են գալիս հասարակության տեղեկատվայնացման ընդհանուր գործընթացի հետևանքով, էլ ավելի մեծ կիրառություն են գտնում տարբեր առարկաների դասավանդման կրթական գործընթացում: Ընթանում է ուսուցման ձևերի և մեթոդների փոփոխություն, որոնք համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ, թույլ են տալիս բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը և աշակերտների մոտիվացումը:

Հետազոտությունը նպատակ ունի պարզելու, թե որքանով ենք մենք տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին, ուսուցման նպատակով մեր կողմից ընտրված, կամ արդեն կիրառվող մեթոդները որքանով են համապատասխանում երաժշտություն առարկայի ուսուցման նպատակներին և չափորոշիչներին: Որքանով է արդյունավետ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը երաժշտության դասերի ընթացքում, որպես լրացուցիչ նյութ և ինչպես է այն դարձնում դասապրոցեսը հետաքրքիր:

Կրտսեր դպրոցը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Տարրական և միջին դպրոցի երաժշտություն դասավանդող ուսուցչի խնդիրն է սովորողին ո՛չ միայն երգել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա որակները, գեղագիտական ճաշակ զարգացնել, սերմանել սեր ազգային և համաշխարհային մշակույթի հանդեպ, ցույց տալ արդյունավետ ուսումնական գործողության ուղիներ: Այս ամենի լուծումը տեսնում են նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունքում, ինչը կնպաստի ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրմանը երաժշտություն առարկայի դասապրոցեսում և կդարձնի դասը արդի, ժամանակներին համահունչ:

Կրթության պայմաններում մշակույթը միակ ոլորտն է, որտեղ կարող են օրինաչափ զարգանալ հասունացող մարդու բարոյահուզական հատկանիշները:

Երիտասարդ սերունդը մեծ մասամբ չի պատկերացնում, ինչպիսի՞ գործնական օգուտ են բերում երաժշտության դասերը, այդ իսկ պատճառով այդ առարկային վերաբերվում են որպես երկրորդական առարկա:

Ելնելով այդ փաստից անհրաժեշտություն է առաջանում դարձնել երաժշտություն առարկան սովորողի համար ավելի հետաքրքիր և արդիական:

## 1.1 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Դիտարկելով «տեխնոլոգիա» հասկացությունը գալիս ենք այն եզրահանգման, որ այն ի հայտ է եկել հազարավոր տարիներ առաջ և լայն գործածություն է ունեցել արդյունաբերության և շինարարության ոլորտներում: Հենց այս ոլորտներից էլ այն փոխանցվել է կրթության ոլորտ: Ա.Ս. Մակարենկոն արդյունաբերության ոլորտի ուսումնասիրությունից հետո եզրակացնում է, որ ցանկացած ոլորտում մարդու գործունեության զարգացումը տեղի է ունենում շղթայաձև՝ պատահական փորձ-արհեստ-տեխնոլոգիա: Առաջին փուլում մարդն առնչվում է որևէ երևույթի հետ, յուրացնում է այն, այնուհետև ստանում է երևույթի հետ աշխատելու ունակություն: Երկրորդ փուլում նա ոչ միայն յուրացնում է, այլ կառուցում է որոշակի գործունեության տեսակ, որը հարմարեցնում է այն ապրելակերպ ապահովելու նպատակով: Արդյունքում ստեղծվում են մասնագիտություններ գործունեության տեսակներին համապատասխան: Օրինակ հյուսն, դարբին, ձկնորս և այլն: Երրորդ փուլում հասարակությունը հասնում է այն մակարդակին, երբ որևէ արտադրանքի արդյունաբերության համար անհրաժեշտ է դառնում ստեղծել մեխանիզմներ և տեխնիկական միջոցներ: Հենց դրանք են կատարում արդյունաբերական արտադրանքի հիմնական աշխատանքը<sup>1</sup>: Այսպիսով արդյունաբերական տեխնոլոգիան դա որևէ արտադրանքի միջոց է, որը կառուցված է տեխնոլոգիական, կամ այլ արտադրական միջոցների կիրառմամբ մարդու ղեկավարության ներքո:

Եթե տեղափոխել տեխնոլոգիա հասկացությունը մանկավարժության ոլորտ, ապա կհասկանանք ուսման որոշակի միջոց, որտեղ ուսուցման իրականացման ֆունկցիայի հիմնական ծանրաբեռնվածությունը կատարում է ուսուցման միջոցը՝ մարդու ղեկավարության ներքո: Տեխնոլոգիական կրթություն հասկացությունը ստեղծում է օպտիմալ պայմաններ բարձր արդյունավետություն ստանալու համար, որը անհնարին է իրականացնել առանց համակարգման, լայն կոմպյուտերիզացիայի, ուսումնական տեխնիկական միջոցների կիրառման, ժամանակակից ակտիվ ուսուցողական մեթոդների, առանց կադրերի, որոնք ունեն ժամանակակից տեխնոլոգիաների ուսուցման պահանջներին համապատասխանող մասնագիտական որակավորում: Այսպիսով, ուսուցիչը դադարում է լինել

<sup>1</sup> Кукушин, В.С. Педагогические технологии: Учебное пособие для студентов педагогических специальностей / В.С. Кукушина. - М.: ИКЦ «МарТ», 2004. - 306 с.

հիմնական տեղեկատվության աղբյուր, այլ պահպանելով դաստիարակողի գործառույթները դառնում է իր էությամբ նորագույն պայմանների, գիտելիքների, կարողությունների և հմտությունների հաջողված ձեռքբերումների կազմակերպիչը և ստեղծողը:

Գոյություն ունի կարծիք, որ մանկավարժությունը դա արվեստ է: Մակայն արվեստը ոչ բոլորին է հասանելի, այն հասանելի է միայն իր գործի վարպետին, որն ունի որոշակի ընդունակություններ: Ցավոք, ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում մանկավարժական արվեստին, իսկ տեխնոլոգիական արվեստին կարող են տիրապետել բոլորը, քանի որ «արվեստը հիմնված է ինտուիցիայի վրա, իսկ տեխնոլոգիան՝ գիտության»<sup>2</sup> Տիրապետել այդ գիտությանը նշանակում է դառնալ լավ ուսուցիչ: Վ. Բեսպալկոյի խոսքերը վկայում են, որ «գիտականորեն հիմնավորված լավագույն ուսուցման և դաստիարակման տեխնոլոգիան – հենց դա է մանկավարժական արվեստը»:<sup>3</sup>

Ա.Ս Մակարենկոն կարծում է, որ մանկավարժական տեխնոլոգիան սերտ կապված է մանկավարժական վարպետության հետ: Վարպետությունը դա մանկավարժական տեխնոլոգիաների կատարյալ տիրապետումն է: Մյուս կողմից, մանկավարժական վարպետությունը, մանկավարժական տեխնոլոգիաների բարձր տիրապետումն է: Միննույն տեխնոլոգիան, կարող է իրականացվել տարբեր ուսուցիչների կողմից, որտեղ և կբացահայտվեն ուսուցչի մանկավարժական վարպետությունը և պրոֆեսիոնալիզմը:<sup>4</sup>

Բազմաթիվ հեղինակներ բացատրում են «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը, որպես համալիր ինտեգրված համակարգ, որն իր մեջ է ներառում դասակարգված բազմաթիվ գործողություններ, որոնք ապահովում են մանկավարժական նպատակայնությունը, բովանդակությունը, առարկայական – տեղեկատվական գործընթացային ասպեկտները՝ ուղղված համակարգված գիտելիքների յուրացմանը, պրոֆեսիոնալ հմտությունների ձեռքբերմանը և սովորողների անհատական որակների ձևավորմանը:

<sup>2</sup>Селевко Г.К. Современные образовательные технологии: Учебное пособие. – М.: Народное образование, 2005 г

<sup>3</sup> Бажукова Е.Н. «Современные информационные технологии» // Научно-методический журнал «Музыка в школе». – 2014. - №6, 4 с

<sup>4</sup> Кукушин, В.С. Педагогические технологии: Учебное пособие для студентов педагогических специальностей / В.С. Кукушина. - М.: ИКЦ «МарТ», 2004. - 306 с.

## 1.2 ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՆ, ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

### ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑ

Ն.Յ.Խլիզովայի կարծիքով մուլտիմեդիան իրենից ներկայացնում է «ունիվերսալ միջոց, քանի որ այն կարող է միաժամանակ հանդիսանալ և՛ ուսումնական միջոց, որը արդյունավետ է դարձնում ուսումնական գործընթացը, հետաքրքիր և հասանելի, մեդիակրթության միջոց, որը ձևավորում է սովորողների մեդիակարողունակությունը, ձևավորում է ընտրելու, գնահատելու և ինքնուրույն ստեղծագործելու կարողունակությունը, այն հանդիսանում է նաև հոգեբանական պրոցեսների զարգացման միջոց. ինչպիսիք են՝ հիշողությունը, ուշադրությունը, երևակայությունը, ընկալումը և տրամաբանական մտածողությունը:»<sup>5</sup>

Անհրաժեշտ է՝ նշել նաև, որ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ հնարավոր է դառնում ընդլայնել ուսումնական նյութի ծավալը՝ ավանդականի համեմատությամբ: Օրինակ՝ համակարգչի առկայությունը թույլ է տալիս որոնելու լրացուցիչ նյութեր կոմպոզիտորների կյանքի, օպերաների և բալետների լիբրետոների վերաբերյալ, դիտելու և ունկնդրելու երաժշտական կատարումներ, պատրաստել սահիկաշարեր տարբեր թեմաներով, լուծել և կառուցել խաչբառեր, ստեղծել խաղ վարժություններ և նախագծեր:

Անհրաժեշտ է նշել, որ նոր տեխնոլոգիաների կիրառումը տրամադրում է ինչպես ուսուցչին, այնպես էլ սովորողին մի շարք առավելություններ:

- Ուսումնական գործընթացի ակտիվացումը տեսողական և ասոցիատիվ միջոցների շնորհիվ:
- Ինտերակտիվ փոխազդեցությունը, որը թույլ է տալիս որոշ սահմաններում կառավարել ինֆորմացիան, անհատապես փոփոխել կարգավորումները:
- Վիրտուալ միջավայրի ստեղծման հնարավորություն:
- Համակարգչային անիմացիաների շնորհիվ տեսահատվածների, նկարների ներառումը:

<sup>5</sup> Н.Ю. Хлызова «Педагогическая теория, эксперимент, практика/ Ред. Т.А Стефановская. -Иркутск: Изд.-во И8кут. Ин-та повыш. квалиф. работ. Образования, 2008-С.275-286

- Դասապրոցեսի ընթացքում մուլտիմեդիա տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է այն փաստին, որ ակտիվ սովորող աշակերտը օբյեկտից վերածվում է սուբյեկտի:<sup>6</sup> Նոր տեխնոլոգիաները չեն անտեսում ավանդական մեթոդները, այն դարձնում է համակարգը բազմաշերտ, որը կարող է գոյություն ունենալ ո՛չ միայն թղթային տարբերակներով, այլ պահպանվել էլեկտրոնային տարբերակով տարբեր կրիչների վրա, բազմաթիվ նշանային համակարգերում, կարող է ենթարկվել ժամանակի ընթացքում փոփոխման, կամ կատարելագործվել:<sup>7</sup>

Ելնելով տարբեր հետազոտողների եզրակացությունից ուզում եմ ներկայացնել մի քանի տեխնոլոգիաներ, որոնք կդարձնեն երաժշտություն առարկայի ուսուցումն էլ ավելի հետաքրքիր, մատչելի յուրացման համար, ժամանակակից և մոտիվացնող:

---

<sup>6</sup> Сумина Г.А Использование мультимедийных технологий в учебном процессе вуза / Г. А. Сумина, Н. Ю. Ушакова// Научный журнал «Успехи современного естествознания».- 2007.- N5 [Электронный ресурс]. URL <http://www.rae.ru/use/pdf/2007/5/34.pdf>.

<sup>7</sup> Шлыкова О.В. Культура мультимедиа. Москва: Фаир-пресс, 2004. [Электронный ресурс]: <https://cyberleninka.ru/article/n/teoreticheskie-osnovy-primeneniya-multimediyh-tehnologiy-na-urokah-muzyki-v-obscheobrazovatelnoy-shkole/viewer/>.

## 2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ և

### ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

#### 1. «Ուսուցման մանկավարժական տեխնոլոգիա»

Մանկավարժական տեխնոլոգիաները բնութագրվում են մի շարք հատկանիշներով՝

- ուսուցման և դաստիարակության հստակ հաջորդական մանկավարժական և դիդակտիկական սկզբունքներով մշակված նպատակների առկայություն;
- յուրացման ենթակա, կամ տեղեկատվության կառուցում, խտացում և համակարգում;
- դիդակտիկական, տեխնիկական, այդ թվում նաև համակարգչային միջոցների համակարգված կիրառություն ուսուցման և ստուգման գործընթացում;
- ուսուցման և դաստիարակության ախտորոշիչ գործառույթի/ֆունկցիայի/ ընդգծում;
- ուսուցման բարձր որակի երաշխիք:

#### 2. «Ուսուցման ավանդական /վերարտադրողական/ տեխնոլոգիա»

Ավանդական տեխնոլոգիան ունի մի շարք կարևոր առավելություններ՝ այն տնտեսում է ժամանակ, օգնում է սովորողներին արագ հասկանալ բարդ նյութը, ապահովում է կրթական-դաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարումը, հնարավոր է դարձնում գիտելիքի հաղորդման նորանոր ձևերի որոնումը:

#### 3. «Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա»

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են երեք հիմնական տեսություններ՝ սոցիալական փոխկախվածություն, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են՝

- անձի զարգացումը և անհատականություն ձևավորումը;
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը;
- սթրեսի հաղթահարումը;
- շրջապատողների հետ առողջ փոխարաբերությունների կառուցումը:



Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը՝

- դրական փոխկախվածություն;
- դեմառդեմ փոխազդեցություն;
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն;
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ;
- խմբային գործընթաց/մշակում;
- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանք:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում;
- սովորողների խմբերի ձևավորում;
- սովորողների տեղաբաշխում;
- առաջադրանքի ներկայացում և բացատրում;
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն;
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում;
- գնահատում:

#### **4. «Զարգացնող ուսուցման տեխնոլոգիա»**

#### **5. «Մտածական գործողությունների փուլային ձևավորման տեխնոլոգիա»**

Ունի դրական և բացասական կողմեր:

Դրական՝

- սովորողի անհատական աշխատանքի համար պայմանների ստեղծում;
- կարողությունների և հմտությունների ձևավորման արագ ընթացք օրինակելի գործողությունների ցուցադրման շնորհիվ;
- կատարելիք գործողությունների մեքենայացում և ավտոմատացում դրանց քայլաշարային/ալգորիթմ/ բնույթի շնորհիվ;
- ինչպես ամբողջ գործունեության, այնպես էլ առանձին գործառույթների նկատմամբ հսկողության որակի ապահովում;
- ուսուցման մեթոդների արագ շտկում՝ ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝

Թերություններն են՝

- տեսական գիտելիքների յուրացման հնարավորության սահմանափակումը;
- մեթոդական մշակումների ապահովման բարդությունը;
- սովորողների մոտ նմանատիպ և միօրինակ մտածողական և շարժողական գործողությունների ձևավորումը;
- սովորողների ստեղծագործական ներուժի անտեսումը:

## **6. «Կոլեկտիվ համագործակցության տեխնոլոգիա»**

### **7. «Լիակատար յուրացման տեխնոլոգիա»**

Ուսուցչի գործունեությունը նախատեսում է՝

- ծանոթություն ուսումնական նպատակներին;
- ուսուցման ընդհանուր պլանի բացատրություն;
- նոր նյութի ներկայացում և շարադրում;
- ընթացիկ ստուգման կազմակերպում;
- ընթացիկ արդյունքների գնահատում;
- կորեկցիոն-շտկողական աշխատանք այն սովորողների հետ, ովքեր լիովին չեն յուրացրել նյութը;
- փոխօգնության փոքր խմբերի ձևավորում և կազմակերպում;
- օգնություն ստացած սովորողների կրկնակի թեստավորում:

### **8. «Տարբեր մակարդակներով ուսուցման տեխնոլոգիա»**

Տարբեր մակարդակներով ուսուցումը նախատեսում է՝

- ճանաչողական մոտիվացիայի ստեղծում և սովորողների ճանաչողական գործունեության խթանում;
- յուրաքանչյուր սովորողի կողմից չափորոշչին համապատասխան ուսումնական նյութի յուրացման մակարդակի ազատակամ ընտրություն;
- սովորողների՝ տարբեր մակարդակներով ինքնուրույն ուսուցման կազմակերպում;
- ուսումնական բովանդակության հիմնական բաղադրիչի լիարժեք յուրացում;
- ուսումնական գործընթացի կազմակերպում տարբեր ձևերով՝ գույգերով, խմբային կամ կոլեկտիվ;
- ուսումնական նյութի յուրացման ընթացիկ ստուգում;

- ներածական և ամփոփիչ ստուգողական աշխատանք;
- անհատական պլաններով նախապատրաստական ուսուցում այս կամ այն կրթական ոլորտի համար:

### **9. «Աղապտացիոն ուսուցման տեխնոլոգիա»**

Այս տեխնոլոգիայի կիրառման դեպում ուսուցման գործընթացը կարող է ներկայանալ երեք փուլով՝

- 1) ուսումնական նոր նյութի բացատրություն / ուսուցիչը սովորեցնում է բոլոր աշակերտներին/;
- 2) ուսուցչի առանձնահատուկ աշխատանքը սովորողների հետ ինքնուրույնաբար աշխատող դասարանի ֆոնի վրա;
- 3) սովորողների ինքնուրույն աշխատանքը:

### **10. «Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա»**

Պրոբլեմային ուսուցման հիմնաքարը որոշակի իրավիճակի ստեղծումն է:

### **11. «Նախագծային ուսուցման տեխնոլոգիա»**

### **12. «Հեռավար ուսուցման տեխնոլոգիա»**

### **3. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ, ՈՐՊԵՍ ՀԱՎԵԼՅԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՁԱՅՆԱԴԱՐԱՆԻ և ՏԵՍԱԴԱՐԱՆԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՂԲՅՈՒՐ**

Հետազոտության արդյունքում կարող եմ դիտարկել հետևյալ վարկածը, որ խաղային տեխնոլոգիաները երաժշտության դասերին տարրական դասարաններում բերում են ավելի խորը ընկալմանը, արդյունավետ երգեցողությանը, հետաքրքրությանը երաժշտության և երաժշտության դասերի հանդեպ այն դեպքում եթե՝

- ունկնդրվող նյութի համար նախապատրաստվեն հատուկ մշակված խաղեր;
- սիստեմատիկ հանձնարարել աշակերտներին կատարել ստեղծագործական աշխատանքներ:

2022 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարվել է փորձնական աշխատանք, որն անցկացվել է երաժշտության դասերի ընթացքում երրորդ դասարաններում: Այն բաղկացած էր հետևյալ փուլերից՝

1. նախապատրաստական փուլ
2. հիմնական ուսուցողական և ձևավորող փուլ
3. ավարտական ամփոփիչ փուլ

Աշխատանքի պայմանը կայանում էր նրանում, որ երրորդ Ա դասարանում նույն թեման դասավանդվում էր առանց ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, երրորդ դասարանում՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

Թեմատիկ պլանավորմամբ ընտրված էր «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթը թեման: Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է բացահայտել աշակերտների կողմից դասական նվագարանները հնչողությամբ տարբերելու կարողությունը, երաժշտության խորը ընկալումը և համեմատումը հեքիաթի կերպարների հետ: Կերպարների ստեղծումը, ունկնդրվող երաժշտության ընթացքում:

Դասն ընթանում է ԽԻԿ համակարգով առանց սահիկաշարի ուղեկցության:

#### **Դասի նպատակներ**

- Ուսուցանել «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթը և ծանոթացնել սիմֆոնիկ նվագախմբի նվագարաններին: Ծանոթացնել Ս. Պրոկոֆևին և իր մանկական ստեղծագործություններին:

- Զարգացնել սիմֆոնիկ նվագախմբի նվագարանները հնչողությամբ տարբերելու կարողությունը:
- Դաստիարակել սեր դասական երաժշտության հանդեպ, ձևավորել գեղագիտական ճաշակ:

### **Վերջնարդյունքը**

- Կճանաչի մեծանուն ռուս կոմպոզիտոր Ս. Պրոկոֆևին և «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթը:
- Կճանաչի սիմֆոնիկ նվագախմբի նվագարանները և կկարողանա համեմատել դրանք սիմֆոնիկ հեքիաթի կերպարների հետ:
- Կկարողանա համեմատել սիմֆոնիկ հեքիաթը երաժշտաթատերական ստեղծագործության հետ, գտնել նմանությունները և տարբերությունները:
- Կստեղծի իր պատկերացրած հերոսին՝ ունկնդրված երաժշտության համապատասխան;
- Կարևորի դասական երաժշտությունը:

### **Դասի ընթացքը**

#### **1. Խթանման փուլ**

Մտազրոհի միջոցով ճշտել սովորողի պատկերացումները սիմֆոնիկ հեքիաթի մասին, ամփոփել միտքը:

#### **1ա. Խթանման փուլ**

Սահիկաշարի կիրառմամբ ցուցադրել հեքիաթ /ԹԱԻՔԵՀ/ բառը կռահելու հանձնարարությունը: Մոտիվացում:

#### **2. Իմաստի ընկալում**

Պատմել Ս. Պրոկոֆևի և նրա մանկական ստեղծագործությունների մասին: Պատկերել քարտեզագրման միջոցով: Բացատրել թե, ինչպե՞ս է կոմպոզիտորը համեմատում սիմֆոնիկ նվագախմբի նվագարանները հեքիաթի հերոսների հետ: Ծանոթացնել դասական նվագարաններին, որոնք հնչում են հեքիաթում և դասակարգել դրանք եռաթև աղյուսակի միջոցով /լարային, փողային, հարվածային/:

Ունկնդրել հեքիաթը և մեկնաբանել յուրաքանչյուր նվագարանը համեմատելով համապատասխան կերպարի հետ:/ունկնդրում դասագրքում տեղադրված QR հղմամբ/

Բացատրել երեխային ստեղծագործության կառուցվածքը և մեկնաբանել թե, ինչու՞ է առաջին մասը հանդարտ, խաղաղ, երկրորդը՝ անհանգիստ, երրորդը՝ հանդիսավոր, հաղթական: Բաժանել դասարանը խմբերի ունկնդրել հեքիաթը երկրորդ անգամ և առաջարկել ներկայացնել իրենց դուր եկած մասը բանավոր խոսքով կամ նկարի միջոցով:

## **2ա.Իմաստի ընկալում**

Պատմել Ս. Պրոկոֆևի և նրա մանկական ստեղծագործությունների մասին: Սահիկաշարի ուղեկցությամբ, կոմպոզիտորի նկարների դիտում, մանկական ստեղծագործության ունկնդրում YouTube հարթակի կիրառմամբ, երեխայի կատարում որևէ նվագարանով: Բացատրել թե, ինչպե՞ս է կոմպոզիտորը համեմատում սիմֆոնիկ նվագախմբի նվագարանները հեքիաթի հերոսների հետ: « Պետյան և գայլը» մուլտֆիլմի դիտում YouTube հարթակի կիրառմամբ: Ծանոթացնել դասական նվագարաններին, որոնք հնչում են հեքիաթում: Դասական նվագարանների դիտում և ունկնդրում սահիկաշարի կիրառմամբ:

Ունկնդրել հեքիաթը սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ և մեկնաբանել յուրաքանչյուր նվագարանը համեմատելով համապատասխան կերպարի հետ:<sup>8</sup> <https://learningapps.org/> հարթակում ստեղծված խաղի միջոցով, երաժշտության ունկնդրման արդյունքում կռահել համապատասխան հեքիաթի կերպարը և կռահել նվագարանը:

Բացատրել երեխային ստեղծագործության կառուցվածքը և մեկնաբանել թե, ինչու՞ է առաջին մասը հանդարտ, խաղաղ, երկրորդը՝ անհանգիստ, երրորդը՝ հանդիսավոր, հաղթական: Բաժանել դասարանը խմբերի ունկնդրել հեքիաթը երկրորդ անգամ և առաջարկել ներկայացնել իրենց դուր եկած մասը բանավոր խոսքով կամ նկարի միջոցով:

## **3. Կշռադատման փուլ**

Վենի դիագրամի միջոցով համեմատել «Ճուտիկ» օպերան «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթի հետ:

**3ա.Կշռադատման փուլ** <sup>9</sup> <https://learningapps.org/9304664> հարթակի կիրառմամբ, ստեղծված խաղի միջոցով կռահել երաժշտական նվագարանները, ըստ դասակարգի՝ փողային, լարային, հարվածային:

### **Մեթոդների նկարագրությունը առանց ժամանակից տեխնոլոգիաների կիրառման**

- քարտեզագրում կոմպոզիտորի ստեղծագործ. գործունեության վերաբերյալ;
- եռաթև աղյուսակի կիրառումը սիմֆոնիկ նվագախմբի նվագարանների դասակարգման վերաբերյալ;
- երաժշտական կերպարը ունկնդրելու միջոցով կռահելու մեթոդը;
- վենի դիագրամի կիրառումը տարբեր ստեղծագործություններ համեմատելու նպատակով:

<sup>8</sup> [Электронный ресурс]. URL <https://learningapps.org/>

<sup>9</sup> [Электронный ресурс]. URL <https://learningapps.org/9304664>

## Մեթոդների նկարագրությունը ժամանակից տեխնոլոգիաների կիրառմամբ

- կարճամետրաժ ֆիլմի դիտում կոմպոզիտորի և մանկական ստեղծագործության վերաբերյալ; <sup>10</sup><https://www.youtube.com/watch?v=UM3TZ0OHUWw>
- «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթի դիտում, նվագախմբի նվագարանների և համապատասխան կերպարների փոխկապման վերաբերյալ; <sup>11</sup><https://www.youtube.com/watch?v=2GhPUAPgGv4>
- երաժշտական կերպարը ունկնդրելու, խաղի միջոցով կռահելու մեթոդը ;<sup>12</sup>  
<https://learningapps.org/165607>
- դասական նվագարանների դասակարգում՝ խաղի միջոցով:  
<https://learningapps.org/9304664>

---

<sup>10</sup> [Электронный ресурс]. URL <https://www.youtube.com/watch?v=UM3TZ0OHUWw>

<sup>11</sup> [Электронный ресурс]. URL <https://www.youtube.com/watch?v=2GhPUAPgGv4>

<sup>12</sup> [Электронный ресурс]. URL <https://learningapps.org/165607>

#### 4. ԱՄՓՈՓՈՒՄ

Փորձնական աշխատանքի արդյունքում բացահայտվեցին մի շարք տարբերություններ աշակերտների ընկալման, յուրացման, ստեղծագործական և գործնական կարողությունների վերաբերյալ: Աշակերտներին շատ դուր եկավ դասը, որտեղ կիրառվեցին բազմաթիվ խաղային տեխնոլոգիաներ, որոնք «կենդանացնում են» դասի նյութը և դարձնում այն ավելի մատչելի, հետաքրքիր և համապատասխանող ժամանակակից պահանջներին: Հարկ եմ համարում նշել նաև, որ չի կարելի ամբողջ դասի ընթացքում կիրառել խաղեր, այն պետք է լրացնի դասը և նպաստի արդյունավետ յուրացմանը: Փորձարկված տեխնոլոգիաները կդարձնեն երաժշտության դասերը ավելի մոտիվացնող, աշակերտները հետաքրքրություն կցուցաբերեն ոչ միայն տվյալ դասի, այլ ընդհանուր առմամբ կհետաքրքրվեն երաժշտությամբ: Փորձնական դասերի ժամանակ երեխաները առավել մեծ հետաքրքրություն են ցուցաբերում այն խաղերի նկատմամբ, որտեղ ինքնուրույն կատարում են հանձնարարությունը և կռահում են ճիշտ պատասխանը: Դա դարձնում է սովորողին ավելի ինքնուրույն, նախաձեռնող, անմիջական և ստեղծող: Աշակերտները հետաքրքրություն են ցուցաբերում ինքնուրույն ստեղծել խաղեր երաժշտական և այլ հետաքրքիր թեմաներով, ինչը նպաստում է նրանց ընդհանուր զարգացմանը:

Վերոնշյալ տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է սովորողի բարոյահոգեբանական մակարդակի բարձրացմանը, բարոյավարքի դրսևորմանը, անհատական ինքնաձևավորմանը, զգացմունքային միջավայրի ստեղծմանը, գեղագիտական ճաշակի զարգացմանը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ խաղային տեխնոլոգիաները իրենց մեջ ներառում են մեծագույն մոտիվացիոն պոտենցիալ և համապատասխանում են անհատականացված ուսուցման սկզբունքներին: Այս ամենը վկայում է ժամանակակից տեխնոլոգիաների արդիականության մասին:



## 5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. Кукушин, В.С. Педагогические технологии: Учебное пособие для студентов педагогических специальностей / В.С. Кукушина. - М.: ИКЦ «МарТ», 2004. – 306
2. Селевко Г.К. Современные образовательные технологии: Учебное пособие. – М.: Народное образование, 2005 г
3. Бажукова Е.Н. «Современные информационные технологии» // Научно-методический журнал «Музыка в школе». – 2014. - №6, 4 с
4. Кукушин, В.С. Педагогические технологии: Учебное пособие для студентов педагогических специальностей / В.С. Кукушина. - М.: ИКЦ «МарТ», 2004. - 306
5. Н.Ю. Хлызова «Педагогическая теория, эксперимент, практика/ Ред. Т.А Стефановская. -Иркутск: Изд.-во И8кут. Ин-та повыш. квалиф. работ. Образования, 2008- С.275-286
6. Сумина Г.А Использование мультимедийных технологий в учебном процессе вуза / Г. А. Сумина, Н. Ю. Ушакова// Научный журнал «Успехи современного естествознания».- 2007.- N5  
[Электронный ресурс]. URL <http://www.rae.ru/use/pdf/2007/5/34.pdf>.
7. Шлыкова О.В. Культура мультимедиа. Москва: Фаир-пресс, 2004. [Электронный ресурс]: <https://cyberleninka.ru/article/n/teoreticheskie-osnovy-primeneniya-multimediynyh-tehnologiy-na-urokah-muzyki-v-obscheobrazovatelnoy-shkole/viewer/>.
8. [Электронный ресурс]. URL <https://learningapps.org/>
9. [Электронный ресурс]. URL <https://learningapps.org/9304664>
10. [Электронный ресурс]. URL <https://www.youtube.com/watch?v=UM3TZ0OHUWw>
11. [Электронный ресурс]. URL <https://www.youtube.com/watch?v=2GhPUAPgGv4>
12. [Электронный ресурс]. URL <https://learningapps.org/165607>